Քննարկվել և հաստատվել է Վերնաշենի համայնքի ավագանու նիստում
06.02.2013թ. որոշում թիվ 7
Վերնաշենի համայնքի
ղեկավար՝ Մ. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՎԵՐՆԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013- 2016 ԹԹ ՍՈՑԻԱԼ _ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

- 2013թ. -

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում :
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները :
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի , նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում :
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա հիմնական ցուցանիշները

Հավելված – 1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը .

Հավելված - 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը :

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ , ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վերնաշեն գյուղը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝մարզկենտրոն Եղեգնաձորից 5կմ հյուսիս-արևելք:Գյուղը հիմնադրել են 1827թ.Սալմաստ գավառից ներգաղթված- ները: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1400-1450 մ բարձրության վրա :

Գյուղի տարածքում կան բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ՝եկեղե-ցիներ, խաչքարեր .

1. *Թանահատի վանքը կառուցված 13-րդ դարում, որտեղ գործել է Գլաձորի համալսարանը:*
2. Արկազի Սուրբ Խաչ գործող եկեղեցին՝ կառուցված 19-րդ դարում:
3. Գլաձորի համալսարանի պատմության թանգարանը:

Գյուղի կլիման արտահայտվում է հետևյալ տիպերով ՝ չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ, բարեխառն երկարատև տաք ամառ: Համայնքին բնորոշ են ուժեղ քամիներ, որոնց ուղղությունը հարավ արևելյան է, ցրտահարություն և երաշտ:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 1328 բնակիչներ : Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0- 6տ)-----69
2. դպրոցականներ (7-17տ)----150
3. 18- 62 տարեկան --- 898
4. թոշակառուներ ---- 211
5. հաշմանդամներ - 125
6. աշխատունակներ ---773

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) և ավագանիների կողմից , որոնք ընտրվում են չորս տարին մեկ անգամ : Գյուղապետարանում ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

1. .աշխատակազմի քարտուղար
2. գլխավոր մասնագետ- ֆինանսիստ
3. առաջատար մասնագետ
4. մեխանիկ
5. օպերատոր
6. ջրբախշիչ
7. հավաքարար

Գյուղապետարանին ենթակա բյուջետային հիմնարկներում աշխատակիցների թվաքանակը՝ 19 հոգի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14. 03. 1997 թ-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տես հավելված 2)

- մշակույթի տուն -1
- գրադարան –1
- բուժկետ - 1
- վարչական շենք -1
- խմելու ջրի ցանց -1
- ոռոգման ցանց -1
- գյուղ . տեխնիկա և գործիքներ - 7

Պահեստամասեր և քսայուղեր չլինելու հետևանքով անմխիթար վիճակում են գյուղ. տեխնիկան ու գործիքները :Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1989 թ – ին , որի մաշվածությունն այնքան մեծ է , որ ջրի կորուստը հասնում է 20% - ի :
Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի : Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 10 կմ ճանապարհ և փողոցներ :

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 341 առանձնատուն , 38.81 հազ. քմ .տարածքով :

ՀՈՂԱՏԱՐԱԾՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը - 5323 հա , որից՝

- Վարելահողեր - 299հա ,
- Խոտհարք -173 հա
- Արոտավայրեր - 586 հա
- Այլ հողատեսքեր -4021հա
- Տրանսպորտային նշանակության -10 հա
- գյուղատնտեսական արտադրության 9.7 հա
- Գերեզմանոց - 5 հա
- Տնամերձ հողեր - 99 հա
- ընդհանուր օգտագործման -15.1
- Պատմամշակույթային -24.6
- Գյուղական փողոցներ - 5 հա
- հասարակական կառուցապատման -2.8 հա
- պտղատու այգի -30հա
- խաղող -26հա
- այլ հողեր -16.6հա
- գետեր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գյուղատնտեսությունը թույլ զարգացած է,հիմնականում բնակչությունը զբաղվում են այգեգործությամբ,բանջարաբուծությամբ,պտղաբուծությամբ անասնապահությամբ:Գյուղատնեսության բնագավառում աշխատում է բնակչության 60 տոկոսը: Համայնքում առկա է .
-Խոշոր եղջերավոր անասուն 386 գլուխ
-Մանր եղջերավոր անասուն 26 գլուխ
Հիմնականում արտադրվում է խաղող, պտուղ,միս, կաթ:
Դաշտամիջյան ճանապարհների վիճակը բարվոք չէ, վարելահողերը անջրդի են:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց , վերջին տարիներին վերանորոգված, գազաֆիկացված, լավ վիճակում է, ուր սովորում են 90 աշակերտ : Դպրոցն ունի 21 աշխատատեղ , : Գյուղում գործում է մանկապարտեզ,որն ունի 1 խումբ՝ 28 երեխա ,9 աշխատող:Մանկապարտեզի շենքի տանիքը վերանորոգվել է, շենքի ներսում վերանորոգման կարիք կա:

ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ , ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի մշակույթի տուն ,որը կառուցվել է 1988թ.: Վերանորոգվել է մշակույթի տան տանիքը, անհրաժեշտ է կատարել ներքին հարդարման աշխատանքներ և ջեռուցել:Գյուղում գործում է սպորտային խումբ,որտեղ դպրոցականները անց են կացնում ֆուտբոլի,վոլեյբոլի, բասկետբոլի պարապմունքներ:Մշակույթի տան շենքում գործում է գրադարան `7500 անուն գրքով:Մշակույթի տան վերանորոգումը գյուղի երիտասարդության համար ժամանցի և մշակութային կենտրոն կլինի:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ կետ, որն ունի երկու աշխատող:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Աշխարահագրական դիրքը , մարզկենտրոնից գտնվում է 5 կ հեռավորության վրա ,
- Հանրապետական նշանակության մայրուղիները մոտ են համայնքին , համայնքի միջով անցնում է 14կմ հանրապետական նշանակության ճանապարհ:
- Համայնքն ունի փոստային բաժանմունք:
- Գազաֆիկացված է առանձնատների 70 % - ը
- Գործում է մշտական լարային ու բջջայն հեռախոսակապ և հեռուստակայանը
- Խմելու և ոռոգման ջրերի համակարգերի առկայությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Գյուղի 30 %- ը չի ոռոգվում ընդհանուր ինքնահոս ջրատարով
- Ծնելիության նվազում
- Գործազրկություն
- Հողերի անջրտիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական ,մշակույթային և հանգստի պայմանները , գյուղը դարձնել գեղեցիկ , բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը :

Բարեփոխումներ կատարելով , նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին :

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթայի կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին
- գազաֆիկացման աշխատանքները ավարտին հասցնել:
- Մանկապարտեզի և գյուղապետարանի շենքի, կուլտուրայի տան վերանորոգում
- Ներհամայնքային փողոցների և ճանապարհների բարեկարգում և լուսավորում .
- Հանդամիջյան ճանապարհների բարեկարգում:

2. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1988 թ. : Ջրագծի երկարությունը կազմում է 33 կմ, այն մասնակի վերանորոգվել է ,բայց անհրաժեշտ է կատարել հիմնական վերանորոգման աշխատանքներ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով ,
- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները :

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

Կազմել ծրագրի իրականացման նախագծա - նախահաշվային փաստաթղթեր ,
ձեռք բերել ծրագրի իրականացման համար անրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ ,
կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը , համայնքը ամբողջությամբ կապահովի շուրջօրյա խմելու ջրով , կնվազի խմելու ջրի կորուստները , ներկայիս 20 % - ից հասնելով 5 % - ի , կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ – տնտեսական պայմանները :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 28 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 100 մլն դրամ , որը խնդրել ենք կառավարությունից :

ԾՐԱԳԻՐ 2

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը , գրադարանը վերանորոգման չեն ենթարկվել : Գյուղապետարանում աշխատողների աշխատանքային պայմանները բարելավելու և բնակիչներին արագ սպասարկելու համար անհրաժեշտ է վերանորոգել գյուղապետարանի վարչական շենքը և տանիքը :Պետք է հաշվի առնել այն հանգամանքը , որ համայնքը չունի աշխատանքից հետո ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայրը: Մանկապարտեզի շենքի մի մասը վերանորոգված է ,տանիքը վերանորոգված է, անհրաժեշտ է կատարել մյուս մասի նորոգումը :
Համայնքի առաջնահերթ խնդիրներից է նշված կառույցների վերանորոգումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

<u>Ծրագրի նպատակներն են</u>

- աշխուժացնել համայնքի մշակույթային կյանքը ,
- մշակույթի տան դահլիճը տրամադրել հարսանյաց արարողությունների , ավագանու նիստերի , համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար ,
- տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ ,
- տրամադրել խաղասենյակներ շախմատի , նարդու և այլ խաղերի համար ,
- բուժկետում բարելավվի բնակչության առաջին բուժօգնությունը :
- Գյուղապետարանի աշխատողների աշխատանքային պայմանների բարելավելը և բնակչության արագ սպասարկումը :

<u>Ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ</u>

- ձեռք բերել ՀԱՆՀ – ի համաձայնությունը ՝ պահանջվող գումարը հատկացնելու համար ,
- վերանորոգել մշակույթի տունը , գյուղապետարանը կատարել ներքին հարդարման, ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ:
- կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը ,
- վերանորոգել գյուղապետարանի տանիքը , կատարել ներքին հարդարման, ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ:
- վերանորոգել մանկապարտեզի շենքը կատարել ներքին հարդարման, ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել,
- Ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար :

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱԳՈՒՄ

Ներածություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 15 կմ, որց 10 կմ անհրաժեշտ է բարեկարգել և լուսավորել.

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը .
- անցկացնել լուսավորում.

Ծրագրի խնդիրները՝

- կազմել ծրագրի իրականացման նախագծա - նախահաշվարկային փաստաթղթերը,
- կատարել ավազի , խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում՝ ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ ,
- աշխատանքները կազմակերպել 2013 –2016թթ . ընթացքում :

ԾՐԱԳԻՐ 4

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՎԱՐՏ

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գյուղի 70 %-ը գազաֆիկացված է , անհարժեշտ է ավարտին հասցնել մնացած թաղամասերի գազաֆիկացումը

ԾՐԱԳՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Ծրագրի իրականացման համար օգտագործել համայնքի միջոցները, և կառավարությունից, դոնոր կազմակերպություններից խնդրել լրացուցիչ գումար:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Համայնքի ամբողջ ազգաբնակչությունը ապահովված կլինի բնական գազով

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը :

Վայոց Ձորի մարզի Վերնաշեն համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

	Եկամուտի տեսակը	2013թ. հազար դրամ	Կանխատեսում		
			2014թ հազար դրամ	2015 հազար դրամ	2016 հազար դրամ
1	Հարկային եկամուտներ	27345.0	24845.0	23450.0	24450.0
1.1	Հողի հարկ	1700.0	1700.0	1800.0	1800.0
1.2	Գույքահարկ	2200.0	2200.0	2300.0	2300.0
2	Այլ հարկային եկամուտներ				
2.1	հողի վարձակալություն	600.0	600.0	650.0	650.0
2.2	Խմելու ջրի սպասարկման արժեք	600.0	600.0	700.0	700.0
2.3	տեղական տուրք	100.0	100.0	100.0	100.0
2.4	գույքի օտարում	500.0	500.0	500.0	500.0
2.5	գույքի վարձավճարներ	--	--	--	--
2.7	Տեղական վարձավճարներ	--	---	--	---
2.8	Այլ ոչ հարկ. եկամուտ.	660.0	660.0	700.0	700.0
2.9	պաշտոնական տրանսֆերներ, դոտացիա	16485.0	16485.0	17000.0	18000.0
3	Եկամուտներ կապիտալի գործառնությունից	--	---	--	--
4	տարեսկզբի ազատ մնացորդ	4500.0	2000.0	1000.0	1000.0

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավոր	2013	2014	2015	2016
	1	2	3	4	5	6
1	Համայնքի տարածքը	հա	5323	5323	5323	5323
2	Բնակչության թիվը	մարդ	1328	1330	1335	1345
3	Ծնունդը	մարդ	10	14	15	15
4	Մահացությունը	մարդ	13	13	12	12
5	Աշխ. ռեսուրսները , այդ թվում	մարդ	900	920	930	940
	ա/ զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ				
6	Գործազրկության մակարդակը	%	25	20	15	10
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	6	6	8	9
8	Պահուստային հողեր	հա	25	25	25	25
9	Պահուստային հողերի օգտագործման մակարդակ	%	0	0	20	40
10	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	33	33	35	35
11	Ներհամայնքային ոռոգման	կմ	30	31	33	35

	ցանցի երկարությունը					
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողերը	հա	140	150	160	170
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	75	75	75	75
14	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	10	8	6	4
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ. քմ	38.81	39.31	39.81	40.31
16	Բնակ կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	15	13	10	5
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	100	110	110	120
18	Ջրի կորուստները ցանցում	%	20	15	10	5
19	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	110	115	120	125
20	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	28	28	28	30
21	Գյուղապետարանի և ենթակա կառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	21	21	21	21

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը -551, այդ թվում՝

2.Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը g.
ա. ցորեն - ցենտներ
բ. գարի –
գ. կարտոֆիլ -100
դ. կաղամբ -
ե. բանջարաբոստ. կուլտ . –500
զ. կաթ -1400
է. միս -25
թ. ձու -150.հազ հատ
ժ. մեղր -20

3. Ցանքատարածություններ
ա. հացահատիկ - հա
բ. կարտոֆիլ -0.5
գ. բանջարաբոստ. կուլտ. –2.54
դ. կաղամբ -
ե.առվույտ -
զ. կորնգան -
է. միամյա խոտեր -

4. Անասնագլխաքանակը , հատ
ա. խոշոր եղջեր. անասուններ -386 գլուխ

այդ թվում՝ կովեր	-91
բ. մանր եղջեր. անասուններ	-26
այդ թվում՝ մայրեր	-34
գ. խոզեր	6
այդ թվում՝ մայրեր	-15
դ. թռչուններ	-648
այդ թվում՝ հավեր	-568
ե. մեղվաընտանիքներ՝	-503

5.Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը , հատ
այդ թվում՝

ա.համայնքային սեփականության		բ. մասնավոր սեփականություն	
թրթուրավոր տրակտոր	-1	թրթուրավոր տրակտոր	-1
անիվավոր տրակտոր՝	-2	անիվավոր տրակտոր՝	-8
հացահատիկային կոմբայն	-1	հացահատիկային կոմբայն	-
խոտհնձիչ կոմբայն	-	խոտհնձիչ կոմբայն	-
-		բեռն. ավտո. տարբեր մակնիշի	-65

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




մանկապարտեզ
վարիչ
դաստի արակ
պարուսույց
դաստ. օգն.
հաշվապահ
լվացարար
երաժիշտ
խոհարար
պահակ

ՀԱՎԵԼՎԱԾ –2

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԵՍԱԿԸ

1. Գյուղապետարանի շենք	1 միավոր
2. Մանկապարտեզի շենք	1 միավոր
3.	
4. Մշակույթի տուն	1 միավոր
5. Գրադարան	1 միավոր
6. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	1 միավոր
7. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ	1 միավոր
8. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ	1 միավոր
9. Գյուղ տեխնիկա և գործիքներ	7 միավոր
9. Գերեզմանատուն	5 հա